ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՄԱՇԵՆՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 8

«05» փետրվարի 2019 թվական գյուղ Մայիսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՎՈՒՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ, 08-071-0012-0002 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՈՐՊԵՍ <<ԱՆՀԱՅՏ>> ՔԱՂԱՔԱՑՈՒ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՓՈԽԱՆՑՎԱԾ 0.148640 ՀԵԿՏԱՐ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 2010 թվականի հունիսի 1-ի N 186-Ն հրամանով հաստատված «Կադաստրային հատակագծերում և քարտեզներում հայտնաբերված սխալների ուղղման հրահանգի» 9-րդ կետի 5-րդ ենթակետը և հաշվի առնելով, որ Մարմաշեն համայնքի Հովունի բնակավայրի վարչական սահմաններում 08-071-0012-0002 կադաստրային ծածկագրով 0.148640 հեկտար մակերեսով, բնակավայրերի նշանակության, բնակելի կառուցապատման հողամասի նկատմամբ գույություն չունեն որևէ իրավունք հաստատող փաստաթղթեր և թույլ տրված անճշտության հետևանքով այն համայնքին է փոխանցվել որպես «անահայտ» քաղաքացու սեփականություն, անճշտությունը ուղղելու նպատակով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարմաշենի համայնքի ավագանին

որոշում է՝

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի Հովունի բնակավայրի վարչական սահմաններում 08-071-0012-0002 կադաստրային ծածկագրով 0.148640 հեկտար մակերեսով, բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման հողամասը՝ ճանաչել Մարմաշեն համայնքի սեփականություն:

2.Համայնքի ղեկավար Կարեն Արշակյանին.

Սահմանված կարգով դիմել Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի Շիրակի մարզային ստորաբաժանում՝ անշարժ գույքի նկատմամբ համայնքի իրավունքները պետական գրանցման ենթարկելու համար:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ

ՄԱՐԶԻ ՄԱՐՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

	Կողմ՝	*Դեմ՝*	*Չեռնպահ՝*
ՄԻՆՈՒԿ ԱՌԱՔԵԼՅԱՆ՝	--------v--------	----------	----------
ԱՐԻՍՏԱՄ ԱՌԱՔԵԼՅԱՆ՝	-------- v--------	----------	----------
ԱՐՄԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ՝	--------v--------	----------	----------
ՍԵՅՈՒՄ ՋԱՔԱՐՅԱՆ՝	---------- v--------	----------	----------
ՄԱՐԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ՝	--------- v--------	----------	----------
ԱՐՄԱՆ ՀՈՎՍԵՓՅԱՆ՝	---------- v--------	----------	----------
ԳԱՐԵԳԻՆ ՄԿՐՏՉՅԱՆ՝	---------- v--------	----------	----------

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՄԱՇԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԿԱՐԵՆ ԱՐՇԱԿՅԱՆ

«05» փետրվարի 2019 թվական
գյուղ Մայիսյան